ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Համաձայն Ընկերութեան յայտարարութեան, յունուարի 27-ին, երեկոյեան 7 ժամին, քաղաքային խորհրդարանի դահլիճում կայացաւ Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը։ Ներկայ էին 74 հոգի, որոնցից 60 անդամներ էին, իսկ 14 հիւրեր։ Առաջինների թւումն էին մի քանի տիկիններ և օրիորդներ։ Ժողովը բացեց խորհուրդի պ. նախագահը, առաջարկելով, համաձայն կանոնադրութեան, ընտրել այսօրւայ ժողովի համար մի նախագահ և մի ատենադպիր։ Ձայների առաւելութեամբ ընտրուեցին նախագահ՝ պ. Աստուածատուր Կաճկաճեանց, իսկ ատենադպիր՝ պ. Հ. Ղուկասեանց։

Ժողովի սկզբում կարդացուեց քննիչ յանձնաժողովի զեկուցումը վերաբերմամբ 18$^{88}/_{89}$ թւականի դրամական հաշիւների, որը, գտնելով ըստ ամենայնի ճիշդ, վաւերացրել էին իրանց ստորագրութիւններով։ Նոյն յանձնաժողովը ներկայացրած զեկուցագրին կցորդել էր իւր մի քանի առաջարկութիւնները, որ ժողովը ուրախութեամբ լսեց։ Այդ առաջարկութիւններն են՝ 1) Ընկերութեան խաղարկական տոմսերը, որոնք անօգուտ կերպով դրած են կառավարութեան գանձարանում իբրև պահեստ, վերցնեն և գրաւ դնեն, իսկ ստացած փողերը չահեցնեն՝ արդիւնքը շատացնելու համար։ Ժողովը, համաձայն լինելով այդ առաջարկութեան, որոշեց այդպէս էլ վարել ապագայում։ 2) Բարւոք է համարում յանձնաժողովը նշանակել պ. հաշւապահին մի յայտնի ռոճիկ, որով նոյն իսկ կարելի է նորա հիւանդութեան կամ բացակայութեան պատճառով վարձել մի ժամանակաւորը, որպէս զի Ընկերութեան գործերը առկախ չը մնան։ Այս առաջարկութեանը խորհուրդի պ. նախագահը պատասխանեց. քանի որ ալժմեան հաշւապահ պ. Պ. Տէր-Մարկոսեանը կատարում է լօժարութեամբ առանց մի որ և իցէ վարձատրութեան, ուստի այդ հարցը լաւ է թողնել մինչև նոր ընտրութիւնները։ Ժողովը յայտնեց իւր շնորհակալութիւնը պ. Տէր-Մարկոսեանցին։ Անշուշտ ատենադպրին ռոճիկ նշանակելու հարցն էլ կը բարձրանայ, կ'աւելացնենք մենք։ 3) Ընկերութեան մօտ գտնուող պահեստ և պալմանաւոր գումարները հարկաւոր է գտնում աւելացնել մայր գումարի վերայ։ Այդ առաջարկութիւնը, հակառակ լինելով նիւրդների պալմաններին, ժողովը մերժեց։

Յետ այնորիկ կարդացուեց Ընկերութեան անդամ-քարտուղար պ. Ա. Գալստեանցի կազմած տեղեկագիրը, որը վերաբերում է Ընկերութեան 1889 թւականի գործունէութեան։ Այդ տեղեկագրից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները։—Անցեալ 1889 թւականին խորհուրդը բաղկացած է եղել՝

նախագահից, ատենադպրից, հաշուապահից, գանձապահից և հինգ խորհրդական անդամներից. ընդամենը 9 հոգի։ Դոքա ունեցել են 19 նիստ։ Ընկերութեան գործունէութիւնը 89 թուականին շատ էլ նախանձելի չէ. նախընթաց տարիների հետ համեմատած՝ նա թոյլ է եղել, դանդաղ և մինչև անգամ անպատուաբեր։ Անդամների մէջ, բացի մի քանիսից, նկատելի է եղել քիչ եռանդ և աշխատութիւն, իսկ մի քանիսների մէջ մինչև անգամ, կարծես թէ, բացակայում էին դոքա, որը, ի հարկէ, պատիւ չէ բերում նոցա, որոնք այդքան ի չարն են գործադրում հասարակութեան իւր վերայ դրած յոյսերը։ Շատերը կանոնաւոր չեն եղել յաճախում նիստերին, իսկ մի քանիսները մինչև անգամ բոլորովին բացակայ են եղել քաղաքից, ներկայ լինելով ժողովներին մի կամ երկու անդամ։ Հէնց այդ է եղել պատճառը, որ Ընկերութեան գործերը կաղել են, եղել են շատ գործեր, որոնք պահանջում են եղել անյապաղ վճիռներ՝ չեն կատարուել, շնորհիւ մի քանի անդամների անտարբերութեան և բացակայութեան, որի պատճառով նիստեր չեն կայացել. իսկ կանոնադրութեան զօրութեամբ նիստը կարող է կայանալ այն ժամանակ, երբ անդամների թիւը 5-ից պակաս չէ։ Թանձանները այս տեսակ դէպքում աւելի պերճախօս են լինում, ուստի դնում եմ այստեղ նոցա, որից կ'երևայ թէ ով քանի անդամ է յաճախել նիստերին։ Նշանակւած է եղել 28 նիստ, իսկ դոցանից կայացել է ընդամենը 19, որոնց նախագահը ներկայ է եղել 19 անդամ, ատենադպիրը 19, գանձապահը 18, հաշուապահը 17, իսկ միւս անդամներից մասնակցել են՝ որը 11, որը 2, որը 4 և վերջապէս 1 անդամ։

Ընկերութեան գործունէութիւնը կայանում է հետևեալում. նա նպաստել է 8 դպրոցների, այն է՝ 1) Բագուայ հայոց դպրոցներին, 2) Ամբանի, 3) Սուլթան Նուխուլ, 4) Բէգլարքենդի, 5) Վարդաշէնի, 6) Դուբալի, 7) Շամախու օրիորդական և 8) Քիլվարի դպրոցներին։ Վերոյիշեալ դպրոցների վերայ ծախս եղել է 4.150 ր., որից ամենամեծ բաժինը ընկել է Բագուայ դպրոցներին, այն է՝ 3.000 ր.։ Վերջինիս մասին եղան երկար վիճաբանութիւններ, որը կը գտնէք մի փոքր ներքև։ Այդ բոլոր նպաստ ստացող դպրոցների մասին ստացւած են տեղեկութիւններ թէ անմիջապէս իրանց հոգաբարձութիւնից և թէ Ընկերութեան անփոփոխ անդամ և ուսումնարանական գործին ծանօթ անձն պ. Բէգլար Ստեփանեանից, որին խորհուրդը խնդրել էր քննել այդ դպրոցները և իւր կարծիքը յայտնել։ Այդ տեղեկութիւններից մի քանիսը շատ էլ ուրախալի չեն, օրինակ, Ընկերութիւնը նպաստել է այնպիսի դպրոցի, ուր կանոնաւոր ուսման և կրթութեան փոխարէն տիրում է եղել հին խալիֆայականը. աշակերտները տարւայ վերջին հազիւ են եղել կարդալ գրելը իմանում և այն էլ առանց հասկանալու կարդացածի միտքը։ Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով, ժողովականներից մի քանիսը այն միտքը յայտնեցին, թէ աւելի լաւ կը լինի, որ նպաստ տրւի այն դպրոցներին, որոնք մի որ և իցէ չոշափելի

օգուտ են տալիս։ Ժողովը, համաձայն լինելով այդ պարոնների կարծիքին, վճռեց, որ նախ քան նախահաշիւ կազմելը, խորհուրդը աշխատի տեղեկութիւններ ժողովել դոցա օգտաւէտութեան մասին և ապա մտցնել նախահաշուի մէջ։

Նոյն թւականի ընթացքում Ընկերութիւնը պահել է Բագուայ ռէալական դպրոցում 4 թոշակառու հայ աշակերտներ և մի որդեգիր Ժնևի համալսարանում, որը, աւարտելով իւր ուսումը, այժմ վարում է ուսուցչական պաշտօն հայոց դպրոցներից մէկում։ Դոցա վերայ ծախսուած է 280 րուբլի։ Անցեալ տարի լրացաւ Ընկերութեան քսանհինգամեակը. Ընկերութիւնը կատարեց յօբելեանը, որի նկարագրութիւնը յայտնի է «Մուրճ»-ի ընթերցողներին։ Այդ հանդէսի առթիւ ծախսուած է 161 ր. 25 կ.։ Ընկերութեան գործունէութեան մի ճիւղն էլ պիտի համարել ուսումնարանական պատկառելի շինութիւնը, որը դժբաղդաբար միջոցների սղութեան պատճառով այժմ շատ դանդաղ է առաջ գնում։ Այդ մասին եղան վիճաբանութիւններ, որը ընթերցողը կը գտնի ստորև։ Ընկերութեան նշանաւոր գործունէութիւնը տարածւում է և Գրադարան-Ընթերցարանի վերայ, որի զարգացնելու և առաջ տանելու գործը յանձնուած է գրադարանի մասնաժողովին, որը բաղկացած է հինգ հոգուց։ Շնորհիւ այդ յանձնաժողովի, այժմ գրադարանը կարգաւորւում է և շարունակում է հարստանալ ամեն տեսակ գրքերով, լրագիրներով և ամսագիրներով։ Աւելորդ չեմ համարում դնել այստեղ հետևեալ տեղեկութիւնները Գրադարան-Ընթերցարանի մասին։ Առ 1-ն յունւարի 1889 թ. գրադարանը արժէր գրքերով 4.760 ր. 21 կ., իսկ այժմ առ 1-ն յունւարի 1890 թ. գրադարանը արժէ 6.111 ր. 11 կ. զանազանութիւնը 1.350 ր. 90 կ. [1]) է։ Առ 1-ն յունւարի 1889 թ. մնում է գրատան գումար 525 ր. 44 կ., յընթացս 89 ամի ստացուած են՝ 1) Երեկոյթից 950 ր., 2) Աղամեանց եղբայրներից նուէր 500 ր., 3) Տոկոս 125 ր., 4) Բաժանորդների ամսավճար 949 ր. 80 կ., 5) Այցելուներից 56 ր. 89 կ., 6) Տուգանք 3 ր. 50 կ., 7) Հին լրագիրների վաճառումից 6 ր., 8) Գրաւականներ 855 ր., 9) Նուէրներ 1 ր. 25 կոպէկ։ Գումարն է 3.978 ր. 88 կոպէկ։

ԾԱԽՔ. 1) Վերադարձուած են գրաւականներ 819 ր. 2) Գրեանց վճար—595 ր. 62 կ. 3) Կազմագին 242 ր. 56 կ. 4) Լրագիրների 300 ր. 5) Ծառայի ռոճիկ 60 ր. 6) Գրապահին 600 ր. 7) Վառելափայտի 15 ր. 62 կ. ընդամենը ծախք է եղել 2.715 ր. 56 կ.։ Հանելով ծախքը մուտքից, մնում է առ 1-ն յունւարի 1890 ամի գրադարանական գումար

---

[1]) Այս գումարի մէջ մտնում է 1889 թւականում բերած գրեանց արժողութիւնը կազմագնով 800 ր., իսկ մնացեալ 550 ր. 90 կոպ. կազմում է ամսագրերի և շաբաթաթերթերի արժողութիւնը կազմագնով հանդերձ, որ չէր մտած նախընթաց տարիների հաշիւների մէջ ըստ մայր մատեանի։

1.263 ր. 32 կ., որից գանձապահի մատ է 1.146 ր. 28 կ., իսկ գրատան կասսալում՝ 117 ր. 4 կ.։ Ցընթացս 1889 ամի դրատունը ունեցել է 180 բաժանորդ ապ և ապ կարգի, ի թիւս որոց 54 հայ և 126 օտարազգի. բացի դրանից եղել են 35-ի չափ ձրի օգտուողներ, որոնք բացառապէս եղել են հայ ուսանողներ և ուսուցիչներ։ Ցընթացս 89 ամի կարդացուել են 783 հայերէն և 9.101 ռուսերէն գրքեր։ Ի վերջոյ տեղեկագրից լայտնուեց, որ մի խումբ գրասէրներ դիմել են Ընկերութեան մի առաջարկութիւնով և լայնի պայմաններով, այն է՝ մտադրութիւն ունենալով հրատարակել դանադան բովանդակութեամբ գրքեր, գլխաւորապէս կրօնա-բարոյագիտական ուղղութեամբ, խնդրում է Ընկերութեան ընդունել իւր հովանաւորութեան ներքոյ և համարել իւր ճիւղերից մէկը։ Խորհուրդը դտնելով գրասէրների առաջարկութիւնը համապատասխան իւր կանոնադրութեան, իսկ պայմանները ձեռընտու՝ լայտնել է իւր համաձայնութիւնը։

Այս մանրամասն և բարեխղճօրէն կազմած տեղեկագրի ընթերցումից լետոյ, եղան վիճաբանութիւններ, գլխաւորապէս շինութեան գործի մասին։ Խորհուրդի լարդոյ անդամները շինութեան դանդաղ առաջ դնալը վերագրում են հասարակութեան անտարբերութեան և սառնութեան, որ ապ ես չեն նկատում այն առատ զոհաբերութիւնները, որ երևում էր գործի սկիզբներում։ Այս կարծիքին ժողովականներից շատերը պատասխանեցին, ասելով, որ հասարակութիւնը ամենևին մեղաւոր չէ, նորա զգայմունքները և զոհաբերութիւնը ազգային գործերում նոյնն է, ինչ որ առաջ, այս դէպքում մեղքը բարդում է խորհուրդի վերայ, որ նորա գործ դրած միջոցները շատ էլ լաջող չեն եղել։—Դիմել մի քանի պարոնների և չը ստանալ բաւարար տուրք, դրանով դեռ չի բացատրւում, թէ ժողովուրդի զգացմունքը մարել է դէպի շինութիւնը. հարկաւոր է այդ դէպքում դիմել փոխանակ անհատների անխտիր ամբողջ հասարակութեան, թէ հարուստի և թէ աղքատի, թէ վաճառականի և թէ արհեստաւորի և այլն։ Հարկաւոր է միայն դոցա ուշադրութիւնը դրաւել, իսկ այդ կարելի է անել թէ եկեղեցու բեմից քահանաների միջոցով և թէ հասարակական ժողովներ կազմելով։ Թէև եղան կարծիքներ, թէ սխալ քայլ էր մի այդպիսի մեծածախս շինութեան ձեռնարկելը, բայց որովհետև դորա մասին մտածելը արդէն ուշ է, ուստի պէտք է աշխատել նրան, որքան կարելի է, շուտ վերջ տալ, որպէս զի գալ տարի կարելի լինի ուսումնարանը տեղափոխել նոր շինութեան մէջ, քանի որ հինը դտնւում է խայտառակ դրութեան մէջ, որը պատիւ չէ բերում Բագուայ հայ հասարակութեան։ Երկար վիճաբանութիւնից լետոյ ժողովը որոշեց՝ 1) Ընտրել շինութեան գործում երկու հմուտ մարդիկ, իբրև օգնականներ պ. Պ. Ղուկասեանցի, որը մինչև այժմ միայնակ վարել է այդ պաշտօնը, իսկ այժմ իւր մասնաւոր գործերի պատճառով անկարող է մենակ վարել այդ գործը։ Ընտրեցան պ. Գ. Նարաբանդեանց և Գրիգոր Աալանեանց. 2) Կազմել մի մասնաժողով հանդանա-

կութեան գործին օգնելու. դորա համար ընտրեցան պ. պ. Հ. Մելիքեանց, Միքայէլ Արամեանց. Գ. Թումայեանց, Յովակիմ Աղամեանց. և Յակ. Ապրեսեանց։ Ինչպէս լսում ենք, արդէն նոյն պարոնների չնորհիւ մի օրում ժողոված է մօտ 6.000 ր., լոյս կայ, որ եթէ այդպէս գնալու լինի ստորագրութիւնը, այս տարի չինութիւնը կը վերջանայ։

Սրանից յետոյ կարդացուեց խորհուրդի 1890 թուականի համար կազմած նախահաշիւը, որ նմանապէս երկար վիճաբանութիւններից յետոյ հաստատուեց այսպէս.

ՄՈՒՏՔ. 1) Դրամագլխոց տոկոսիք—4.500 ր. 2) Խաղատոմսերի կտրոններից 240 ր. 3) Տարեկան անդամներից 200 ր. 4) Նուիրաբերութիւններից 500 ր. 5) Բանկից դիվիդէնդ և պրեմիա 10 ր. 6) Նկուղի վարձ 300 ր. և 7) Անակնկալ աղբիւրներից 300 ր., ընդամենը 6.150 ր.։

ԾԱԽՔ. 1) Բազուայ երկսեռ դպրոցներին 3.000 ր. 2) Ընկերութեան ծառային 60 ր. 3) Խաղատոմսերի ապահովութեան 70 ր. 4) Շինութեան ապահովութեան 40 ր. 5) Շինութեան կարկատանաց 100 ր. 6) Տպագրական և պօստի ծախք 200 ր. 7) Գործավարական ծախք 100 ր. 8) Բարեգործական դէպքերի համար 100 ր. 9) Բազուայ Բէալական դըպրոցի աղքատ հայ ուսանողներին 130 ր. 10) Շամախու օրիորդաց ուսումնարանին 150 ր. 11) Ղուբայի դպրոցին 200 ր. 12) Քիլվարի դըպրոցին 300 ր. 13) Խաչմազի դպրոցին 100 ր. 14) Ամրվանի դպրոցին 200 ր. 15) Սուլթան Նուխայ դպրոցին 200 ր. 16) Բէգլարքենդի դպրոցին 150 ր., 17) Վարդաշէնի դպրոցին 100 ր. 18) Հադրութի դպրոցին 125 ր. 19) Գիրք գիւղի դպրոցին 125 ր. 20) Ղալակալի դպրոցին 100 ր. 21) Մէյսարի գիւղի դպրոցին 300 ր. և 22) Որդեգիր ուսուցչութեան համար 300 ր.։ Գումարն է 6.250 ր.։

Նախահաշիւի վերաբերմամբ վիճաբանութիւնները գլխաւորապէս վերաբերում են տեղուս երկսեռ և Մէյսարի գիւղի դպրոցներին։ Բազուայ դպրոցների վերաբերմամբ խուրհուրդի նախագահ պ. Անտոնեանցը այն կարծիքի էր, որ մի այդպիսի պատկառելի գումար 3.000 ր. տալ տեղուս դպրոցներին՝ մի այդպիսի չնչին ծրագիր իրագործելու համար՝ աւելորդ է համարում. Ընկերութիւնը անելիք գործեր շատ ունի, բայց դժբաղդաբար փող չ'ունի։ Նորա համոզմունքն է, որ ժամանակ է այդ գումարը կամաց-կամաց կրճատելով վերացնել և այդ հոգը թողնել հոգաբարձութեան և ժողովուրդի վերայ։ Խորհուրդի երկրորդ պատճառաբանութիւնը այն է, որ նորա համար պարզ չէ Ընկերութեան յարաբերութիւնը թէ դէպի ուսումնարանը և թէ դէպի հոգևոր իշխանութիւնը, և առ հասարակ նորա միջամտութիւնը դպրոցական կեանքի մէջ, նոր կանոնադրութեան զօրութեամբ, իրանից վերցրած է։ Խորհուրդի այս կարծիքը չարուցեց բուռն վիճաբանութիւններ. Ժողովականներից մի քանիսը կատարեալ համաձայն լինելով պ. նախագահի կարծիքին, աւելացրին

և տն, որ այդ օժանդակութիւնը կարելի է վերացնել և թող հոգաբարձութիւնը աշխատի միջոցներ ձեռք բերել, որ շնորհիւ պատրաստի դրամի, դատապարտած է անգործութեան։ Ժողովականներից ոմանք էլ պնդում էին թէ այժմ ուսումնարանին զրկելով իւր օժանդակութեան մի մասից, հոգաբարձութեան կարելի է նեղ դրութեան մէջ դնել, քանի որ նա իւր նախահաշիւը կազմել է՝ ի նկատի ունենալով Ընկերութեան իրան հասանելիք օժանդակութիւնը։ Նոցա ցանկութիւնն է որ, եթէ կարելի է, ընդհակառակը, աւելացնեն, որպէս զի կարելի լինի ժամանակով այս դպրոցը վերածել թեմականի, որպիսի ցանկութիւն ունի և սրբազան առաջնորդը։ Այդ հարցը պաշտպանողներից կային և այնպիսիները, որոնք հարկաւոր են համարում ուսումնարանին օգնել հէնց այն պատճառով, որ իբր թէ շատերը աւել են և կտակել դոմարներ, աչքի առաջ ունենալով Բագուայ դպրոցները. բայց այդ հերքուեց, ասելով որ այդ տեսակ սահմանափակ զգացմունքներ չարդոյ հիմնադիրները և անդամները չեն ունեցել։ Այս առթիւ եղած երկար վիճաբանութիւններից յետոյ խորհուրդի պ. նախագահը յայտնեց, որ ինքը բարոյ է համարում ընտրել մի յանձնաժողով, յանձնելով նրան մշակել մինչև գալ ընդհանուր ժողով այս հարցերը, թէ ինչ ուսման ծրագիր պիտի ունենան մեր այստեղի ուսումնարանները, ինչ կազմութիւն, ինչ վարչութիւն և ինչ յարաբերութիւն պիտի ունենայ Ընկերութիւնը դէպի հոգևոր իշխանութիւնը և ընդհակառակը։ Ընդհանուր ժողովը քննելով նոցա ներկայացրածը՝ իւր կողմից կ'առաջարկի ուր հարկն է։ Ժողովը հաւանութիւն տալով այս առաջարկութեան, ընտրեց յանձնաժողովի անդամներ հետևեալ պարոններին. պ. պ. Բէգլար Ստեփանեանցին, Ղուկասեանցին, Միքայէլ Յովհաննեանցին, Եսայի Սաֆարեանցին, Ն. Աբելեանցին, Հ. Ղուկասեանցին, Աստուածատուր Կաճկաճեանցին, Ա. Գալստեանցին, Միքայէլ Ալիբէգեանցին, Եղիշէ քահ. Գեղամեանցին, Խորէն քահ. Միրզաբէգեանցին, Էմմանուէլ Փերբուղալեանցին, Գ. Թումայեանցին և Խրիստափոր Անտոնեանցին։

Գալով Մէյսարի գիւղի դպրոցին, որի մասին սրբազան առաջնորդը մի խնդրագրով դիմել է Ընկերութեան, խնդրելով 300 ր. նպաստ վերոյիշեալ գիւղում դպրոց ունենալու համար, ժողովականներին երկար վիճաբանութեան առիթ տուեց։ Սրբազանը իւր գրութիւնով մի և նոյն ժամանակ բացատրում է, թէ ինչն է ստիպում այդ գիւղում դպրոց ունենալու։ Գրութիւնից յայտնուեց, որ այդ գիւղին սպառնում է վտանգ, այն էլ կրօնափոխութեան կողմից, եթէ շուտափոյթ օգնութիւն չը հասցնի։ Սրբազանի միտքն է՝ նշանակել այդ դպրոցում մի քահանայի, որը մի և նոյն ժամանակ և քարոզչի դեր էլ պիտի կատարի։ Որովհետև վիճաբանութիւնները այս առթիւ երկար տևեցին, ուստի յետաձգուեց միւս նիստին, որ որոշուեց նշանակել յունուարի 29-ին։

Յունուարի 29-ին կայացաւ քաղաքային խորհրդարանի դահլիճում ընդ-

հանուր ժողովի երկրորդ նիստը։ Ներկայ էին 36 անդամներ և 22 հիւրեր։ Նախագահը ևատենադպիրը նոյն էին։ Մէկսարի գիւղի ուսումնարանի հարցը այնքան նշանաւոր էր, որ այս նիստի մեծ մասը ևս նուիրուեց նրան։ Այս անգամ ժողովականներից մի քանիսի տեղեկութիւնները աւելի ևս հաստատեցին սրբազան առաջնորդի ասածները. նոցա ասելով, լիրաւի որ ամբողջ գաւառում հազիւ թէ գտնուի մի այսպիսի լեռ ընկած, գեհիկ, կոպիտ, տգէտ և դիւրահաւատ ժողովուրդ։ Գտնուեցան և այնպիսի անձինք, որոնք այս հարցի մէջ աւելի խորը մտան. այսպէս պ. պ. Ս. Թառալեանցը, Էմմանուէլ Փիրբուդաղեանցը և Ն. Աբելեանցը բացատրեցին, որ կրօնափոխութեան խտը վերաբերում է ոչ միայն լիշնալ գիւղին, այլ և Շամախու գաւառի գիւղերի մեծ մասին և այդ պատճառով հարկաւոր են համարում, քանի որ դեռ ուշ չէ, շուտափոյթ օգնութեան հասնել, եթէ ոչ շատ շուտով կարող ենք զրկուել մի ամբողջ գաւառից։ Դորա համար իւրաքանչիւրը առաջարկում էր իւր միջոցները։ Մէկի կարծիքով դիւղական դպրոցը անզօր կը լինի այդ խտի առաջը առնելու, որ առ այժմ հարկաւոր է ունենալ քարոզիչ ամբողջ գաւառի համար, միւսը լարմար է գտնում դպրոցը իւր քարոզիչ քահանայով, իսկ երրորդը երկուսն էլ անհրաժեշտ է գտնում այդ գործում։ Ժողովը երկար քննելուց լետոյ վճռեց սրբազանի առաջարկութիւնը լարգել և տալ խնդրած 300 ր., մի և նոյն ժամանակ պարտաւորացրին, որ խորհուրդը այդ մասին բանակցի սրբազանի հետ, որ նշանակուի մի այնպիսի հմուտ քահանայ, որ ունենար մի և նոյն ժամանակ և ուսուցչական իրաւունք և կարողանար արդարացնել իւր վերայ դրած լոյսերը։ Մեր համեստ կարծիքը այս հարցում այն է, որ այդ երկու ծանր պաշտօնները միացնելով մի անձնաւորութեան մէջ, դրանով և ոչ մի նպատակի չենք հասնիլ, կը կաղի և՛ դպրոցական գործը և՛ քարոզչականը. հարկաւոր է անպատճառ իրարուց զատել այդ երկու պաշտօնները, նամանաւանդ որ այդ տեսակ անձնաւորութիւն հազիւ թէ մեր մէջ գտնուի, որ վերոլիշեալ չնչին ռոճիկով համաձայնէր գնալ գիւղը մի այդ տեսակ միսսիայի համար։ Այդ դումարով կարելի է շատ թէ քիչ կանոնաւոր ուսուցիչ վարձել, որը լաջողութեամբ կը տանէր ուսումնարանի գործը, իսկ քահանայի մասին պիտի առանձին մտածել։

Որովհետև Ընկերութիւնը այդ նպատակով աւելորդ դրամ չ'ունէր, ուստի Հայր Եղիշէն և պ. Դոլուխանեանցը խոստացան ներկայացնել խորհուրդին, երբ վերոլիշեալ վճռի մասին բաւարար պատասխան կը ստացուի սրբազան առաջնորդից։

Վերոլիշեալ հարցի հետ կապ ունէր և քարոզչի հարցը, որը քանիցս ընդհանուր ժողովներում լարուցուել է, բայց միշտ մնացել է անկատար, չը նայած, որ դրամը պատրաստ է։ Բանը նրանումն է, որ մենք չ'ունինք քարոզիչ, ինչպէս երևաց խորհուրդի տուած տեղեկութիւնից, որը քանիցս դորա մասին դիմել է կաթուղիկոսին, բայց միշտ ստացել է բացասական

պատասխան՝ այն է, որ հոգևորականաց մէջ քարոզիչ չը կայ։ Այս որքան ցաւալի լինի, բայց և այնպէս դառն ճշմարտութիւն է։ Ի վերջոյ հարցը վճռուեց այսպէս. յանձնել խորհուրդին դորա մասին դարձեալ բանակցել հոգևոր իշխանութեան հետ, յայտնելով որ նշանակած է քարոզչի համար 1.500 ր., եթէ անձնաւորութիւն կայ ի նկատի, բարեհաճի նշանակել։

Սրանից յետոյ կարդացուեցին խորհուրդին ուղղուած խնդիրները։ Դոցանից նոքա, որոնք վերաբերում էին Ընկերութիւնից օժանդակութիւն խնդրելուն, գումար չը լինելու պատճառով, մերժուեցան. բայց և այնպէս որոշուեց 300 ր. տալ այն որդեգրին, որը կը կամենար պատրաստուել ուսուցչական ասպարիզի համար։ Լսուեց և խորհուրդի անդամներից մէկի՝ այն է պ. Պ. Ղուկասեանցի հրաժարականը, որով նա յայտնում է, որ անձնական գործերի շատութեան պաճառով այլ ևս անկարող է վարել Ընկերութեան գործերը։ Ժողովը աչքի առաջ ունենալով նորա օգտաւէտ գործունէութիւնը և նորա անհրաժեշտ լինելը չինութեան գործում, վճռեց մի պատգամաւորութիւն ուղարկել նորա մօտ և խնդրել, որ ստանձնած պաշտօնը յանձն առնի վարել մինչև տարեայ վերջը, երբ կը լինի բոլոր անդամների վերընտրութիւնը։ Լսուեց նոյնպէս խորհուրդի անդամներից երկուսի հրաժարականը՝ այն է պ. պ. Կարապետեանցի և Զալեանցի, որոնք հրաժարւում են քաղաքիցս առ միշտ բացակայ լինելու պատճառով։ Ժողովը նոցա տեղ գաղտնի քուէարկութեամբ ընտրեց հայր Եղիշէ Դեղամեանցին և պ. Դոլուխանեանցին, առաջինն 11, իսկ երկրորդին 21 ձայնով. որովհետև առաջինը նոյնպէս վերստուգող յանձնաժողովի անդամ էր, այդ պատճառով նորա տեղ ընտրեցին պ. Ն. Սարումեանցին։

Սրանից յետոյ պ. Անտոնեանցը յայտնեց, որ Ընկերութեան խաղատոմսերից մէկը այս տարի տարել է 500 ր., և խնդրում է որոշել, թէ ինչ պէտք է անել այդ գումարը. ժողովը որոշեց միացնել մայր գումարի հետ։ Ժողովը լսեց հասարակութեան դրաւոր խնդիրը, որ վերաբերում է քաղաքիս աղքատանոցին։ Խնդրատու պարոնները խնդրում են յարգոյ ժողովից, որ աղքատանոցի վարչութիւնը և գործավարութիւնը աւելի կանոնաւորի և ենթարկի հասարակական հսկողութեան։ Սորա մասին եղան վիճաբանութիւններ, որից յետոյ եկան այն եզրակացութեան, որ հասարակական չինելու համար հարկաւոր է նրան կապել եկեղեցու հետ։ Դորա համար աղքատանոցի հոգաբարձութիւնը արդէն դիմել է ուր հարկն է և առաջարկել է կանոնադրութիւնը ի հաստատութիւն, որից յետոյ նա պարտաւոր է տալ տեղեկութիւններ աղքատանոցի վիճակի մասին։

Ժողովը փակուելուց առաջ նախագահը առաջարկեց իւրաքանչիւր տարի, մայիսի 21-ին, տօնել Ընկերութեան տարեդարձը և ի պատիւ այդ օրուայ կազմել մի ժողովրդական զբօսանք յօգուտ Ընկերութեան։

Այս առաջարկութիւնը միաձայն ընդունուեց, որից յետոյ ժողովը փակուած համարուեց։

Ժողովը վերջացաւ ժամը 10-ին։

ՍԻՆՏԻՍ ՋԼԻՅԵԱՆՑ

Բաղու։